ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 ապրիլի 2026 թվականի N 421 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-Ի N 985-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հուլիսի 17-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՄԵԼ ՄԵՏԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և «ՄԵԼ ՄԵՏԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «ԱՄԻՕ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ արտոնությունը կիրառելու մասին» N 985-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 2-րդ կետում «1-ին կետի» բառերը փոխարինել «1-ին և 2-րդ կետերի» բառերով.

2) հավելվածի ցանկի «ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ԴՐԱՆՑ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՈՒ ՀԱՄԱԼՐՈՂ ՄԱՍԵՐ» աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

1.	8462610019	Սառը մշակման համար հիդրավլիկ մամլիչ՝ թվային ծրագրային կառավարմամբ, մետաղները բրիկետավորելու համար, քանդված իր աքսեսուարներով, 25kw	Metallics Hydraulic Press, Unassembled with Accessories, 25kw տարողունակությունը՝ 350 տ, ցիկլի ժամանակը՝ 70 վ կամ պակաս	հատ	1	Չինաստան, Հնդկաստան	Չինաստան, Հնդկաստան, ԱՄԷ, Իրան	27 000 000	Լիզինգ Պայմանագիր թիվ L25-0013
2.	8462610019	Սառը մշակման համար հիդրավլիկ մամլիչ՝ թվային ծրագրային կառավարմամբ, կապարի (մետաղի) բրիկետավորման համար, քանդված իր աքսեսուարներով, 22kw	E-Lead Hydraulic Press Unassembled with Accessories, 22kw տարողունակությունը՝ 50 տ, ցիկլի ժամանակը՝ 20 վ կամ պակաս	հատ	1	Չինաստան, Հնդկաստան	Չինաստան, Հնդկաստան, ԱՄԷ, Իրան	23 000 000	Լիզինգ Պայմանագիր թիվ L25-0013

».

3) հավելվածի ցանկի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերությունում «129 000 000» թիվը փոխարինել «143 000 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

02.04.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ